






30.04.2015թ-ին կայացավ Արևաբույր համայնքի ավագանու ընտրական նիստը Նիստին մասնակցում էին ավագանու հինգ անդամները : Մասնակցությամբ՝ 1. Ռ. Շիրոյան, 2. Ա. Ավետիսյան, 3. Ա. Մարգարյան , 4. Բ. Հարությունյան, 5. Գ. Եղիազարյան : Նիստը նախագահում էր՝ Մ. Ավետիսյան : Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Հունանյան :

- Օրակարգ -

1. Արևաբույր համայնքի 09.08.2006թ. N 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2. Արևաբույր համայնքի 2015 թ-ի վարչական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին Հաստատել նիստի օրակարգը






Ավագանի՝

	Ռ. Շիրոյան	Կողմ
	Ա. Ավետիսյան	Կողմ
	Ա. Մարգարյան	Կողմ
	Բ. Հարությունյան	Կողմ
	Գ. Եղիազարյան	Կողմ

Արևաբույր համայնքի 09.08.2006թ. N 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: Լսեցին. զեկուցեց գյուղապետ Մ. Ավետիսյանը, նա ավագանուն ներկայացրեց հետևյալի մասին, որ ս/թ մարտի 19 – ին Աղրբեջանի կողմից սանձազորված դիվերսիայի ընթացքում մարտական գործողություն կատարելիս ծանր վիրավորվեց Արևաբույր գյուղի բնակիչ , ժամ կետային զինծառայող՝ Սամվել Սամունի Հակոբյանը , որը զոհակցության չգալով մահացավ ս/թ մարտի 26-ին : Նա ավագանուն պաշարկեց, որ ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով Արևաբույր համայնքի ավագանու 09.08.2006թ. N 3 որոշման մեջ կատարել փոփոխություն ՀՀ օրենքի մասին վերանվանել զոհված զինծառայող Սամվել Հակոբյանի անունով ի հարգանք նրա կատարած սխրանքի : Արտահայտվեցին. ավագանու անդամներ Ռ. Շիրոյանը և Ա. Ավետիսյանը նշեցին որ հինգ ընդունելով « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջները անհրաժեշտ է Արևաբույր համայնքի ավագանու 09.08.2006թ. N 3 որոշման մեջ կատարել փոփոխություն:

3.Որոշեցին. Հաստատել Արևաբույր համայնքի ավագանու 09.08.2006թ. N 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու գյուղապետի ներկայացրած պաշարկը և նախկին Հ. Բաղրանյան փողոցը վերանվանել Արևաբույր գյուղի նախկին բնակիչ զոհված ժամկետային զինծառայող Սամվել Հակոբյանի անունով. Զվեարկության արդյունքները կողմ – 5, դեմ – 0, ձեռնպահ – 0 :






Ավագանի՝

	Ռ. Շիրոյան	Կողմ
	Ա. Ավետիսյան	Կողմ
	Ա. Մարգարյան	Կողմ
	Բ. Հարությունյան	Կողմ
	Գ. Եղիազարյան	Կողմ

Արևաբույր համայնքի 2015 թ-ի վարչական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին  
Լսեցին. զեկուցեց հաշվապահ Վ. Ալիխանյանը, նա ավագանուն ներկայացրեց Արևաբուր  
համայնքի 2015թ-ի վարչական բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները

- 1) Վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդ խմբի 4891 պահուստային միջոցներ  
հոդվածից պակասեցնել 300.0 հազար դրամ և ավելացնել վարչական բյուջեի 06.4.1  
փողոցային լուսավորության խմբի 4212 էլեկտրական էներգիայի ձեռքբերում հոդվածին  
300.0 հազար դրամ :
- 2) Վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդ խմբի 4891 պահուստային միջոցներ  
հոդվածից պակասեցնել 100.0 հազար դրամ և ավելացնել վարչական բյուջեի 05.1.1  
աղբահանում 4264 տրանսպորտային նյութեր հոդվածին 100.0 հազար դրամ :  
Արտահայտվեցին. ավագանու անդամներ Բ. Հարությունյանը և Գ. Եղիազարյանը , նշեցին որ  
հիմք ընդունելով « ՏԻՄ » ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 3-րդ կետը անհրաժեշտ է Արևաբույր  
համայնքի 2015թ. վարչական բյուջեում կատարել փոփոխություններ:  
4. Որոշեցին . Հաստատել Արևաբույր համայնքի 2015թ. վարչական բյուջեում կատարված  
հետևյալ փոփոխությունները
- 1) Վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդ խմբի 4891 պահուստային միջոցներ  
հոդվածից պակասեցնել 300.0 հազար դրամ և ավելացնել վարչական բյուջեի 06.4.1  
փողոցային լուսավորության խմբի 4212 էլեկտրական էներգիայի ձեռքբերում հոդվածին  
300.0 հազար դրամ :
- 2) Վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդ խմբի 4891 պահուստային միջոցներ  
հոդվածից պակասեցնել 100.0 հազար դրամ և ավելացնել վարչական բյուջեի 05.1.1  
աղբահանում 4264 տրանսպորտային նյութեր հոդվածին 100.0 հազար դրամ :  
Քվեարկության արդյունքները կողմ – 5, դեմ – 0 , ձեռնպահ – 0 :

Ավագանի՝

	Ռ. Շիրոյան	կողմ
	Ա. Ավետիսյան	կողմ
	Ա. Մարգարյան	կողմ
	Բ. Հարությունյան	կողմ
	Գ. Եղիազարյան	կողմ

Արևաբույրի գյուղապետ  Ս. Ավետիսյան